«ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ»
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ

Գիտական պարբերականի հրատարակչական էթիկան սկզբունքների և կանոնների համահավաքն է, որով իրենց փոխհարաբերություններում ղեկավարվում են գիտական հրապարակումների հրատարակման գործընթացի մասնակիցները՝ հեղինակները, գրախոսները, խմբագիրները, հրատարակիչները, տարածողներն ու ընթերցողները:

«Արվեստագիտական հանդեսի» հրատարակչական քաղաքականությունը հետևում է Հրատարակչական էթիկայի միջազգային կոմիտեի (COPE, https://publicationethics.org/) առաջարկություններին:

Խմբագրական խորհրդի և հրատարակչի գործունեության բարոյական սկզբունքները

Խմբագրական խորհուրդը (գլխավոր խմբագիրը) իր աշխատանքում ելնում է հեղինակային իրավունքի, գրագողության և բարոյական սկզբունքների վերաբերյալ ՀՀ օրենսդրության ժամանակակից իրավական պահանջներից, որոնք արժանացել են առաջատար գիտական պարբերականների հրատարակիչների համայնքի հավանությանը և պատասխանատվություն է կրում հեղինակային ստեղծագործությունների հանրահռչակման համար, ինչը անհրաժեշտ է դարձնում հետևել հետևյալ հիմնարար սկզբունքներին՝

- հետազոտության արդիականությանը և օրիգինալությանը,
- արդյունքների արժանահավատությանը և կատարված աշխատանքի գիտական նշանակությանը,
- քննարկվող թեմատիկայի վերաբերյալ այլ հետազոտողների ներդրման ճանաչմանը և օգտագործված աշժխատանքներին մատենագիտական հղումների պարտադիր առկայությանը,
- համահեղինակների թվում հետազոտության կատարման ընթացքում էական ներդրում ունեցած մասնակիցների ընդգրկմանը, և ներկայացված աշխատանքը հրատարակության երաշխավորման համար բոլոր համահեղինակների հավանության առկայությանը,
- հեղինակի կամ խմբագրական խորհրդի կողմից հայտնաբերված սխալների և անճշտությունների շտկման համար անհապաղ միջոցների ձեռնարկմանը:

Քննարկման ներկայացված ձեռագրերից ստացված անտիպ տվյալներն առանց հեղինակի գրավոր համաձայնության չեն կարող օգտագործվել կամ փոխանցվել երրորդ անձանց: Խմբագրման ընթացքում ստացված տեղեկատվությունը կամ գաղափարները պետք է պահպանեն գաղտնիությունը:

Խմբագիրը չպետք է հրապարակման թույլ տա տեղեկատվություն, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այն գրագողություն է կամ պարունակում է հրապարակման համար արգելված նյութեր:

Խմբագիրը հրատարակչի հետ համատեղ չպետք է անպատասխան թողնեն քննարկվող ձեռագրերի կամ հրապարակված նյութերի վերաբերյալ բողոքներն ու

գանգատները, իսկ վիճահարույց դեպքերում պետք է կիրառեն խաթարված իրավունքների վերականգնման համար բոլոր անհրաժեշտ միջոցները:

Գրախոսի գործունեության բարոյական սկզբունքները

Հեղինակային նյութերի փորձաքննությունն իրականացնող գրախոսի անկողմնակալ ու անաչառ գործունեությունը պիտի համապատասխանի հետևյալ սկզբունքներին՝

- գրախոսման համար ստացված ձեռագիրը դիտարկվում է որպես գաղտնի փաստաթուղթ, որը չի կարելի ծանոթանալու համար փոխանցել խմբագրության կողմից համապատասխան լիազորություններ չունեցող երրորդ անձանց,
- գրախոսը պարտավոր է հետազոտության շարադրված արդյունքների վերաբերյալ տալ օբյեկտիվ և փաստարկված գնահատական, անընդունելի է հեղինակի անձնական քննադատությունը,
- չի կարելի անձնական նպատակներով օգտագործել քննարկման համար ներկայացված ձեռագրերից ստացված չհրապարակված տվյալները,
- եթե գրախոսը, իր կարծիքով, չունի տվյալ ձեռագրի գնահատման համար անհրաժեշտ որակավորում կամ չի կարող լինել օբյեկտիվ, ենթադրենք, հեղինակի կամ կազմակերպության հետաքրքրությունների միջև եղած բախման պատճառով, այդ մասին պետք է տեղեկացնի խմբագրին և խնդրի իրեն չներգրավել տվյալ ձեռագրի գրախոսման գործընթացում:

Հեղինակի գործունեության բարոյական սկզբունքները

Հեղինակը (կամ հեղինակային խումբը) գիտակցում է գիտական հետազոտության նորույթի պատասխանատվությունը և արդյունքների արժանահավատությունը, ինչը ենթադրում է հետևյալ սկզբունքների պահպանումը՝

- հեղինակները պարտավոր են ներկայացնել կատարված հետազոտությունների արժանահավատ արդյունքները, անընդունելի են սխալ կամ կեղծ հիմնավորումները,
- հեղինակները պետք է երաշխավորեն, որ բնագրում շարադրված հետազոտության արդյունքները լիարժեքորեն օրիգինալ են,
- փոխառված հատվածները կամ հիմնավորումները պետք է ուղեկցվեն նրանց հեղինակի և սկզբնաղբյուրի նշումով. անբարոյական ու անընդունելի է փոխառումների չարաշահումը, ինչպես նաև ցանկացած տիպի գրագողություն (ներառյալ թաքնված կամ քողարկված), չձևակերպված մեջբերումները, ուրիշների հետազոտությունների արդյունքների վերաշարադրումը կամ յուրացումը:
- անհրաժեշտ է նշել հետազոտության վրա այս կամ այն չափով ազդած բոլոր մարդկանց ներդրումը, մասնավորապես, ձեռագրում պետք է ներկայացված լինեն հղումներ հետազոտության իրականացման ընթացքում դեր ունեցած աշխատանքների վրա,
- հեղինակները չպետք է «Արվեստագիտական հանդես» ներկայացնեն այլ գիտական պարբերական ուղարկված և այնտեղ ընդունվա՛ կամ յալ հանդեսներում հրատարակված ձեռագրեր,

- որպես համահեղինակներ պիտի նշվեն կատարված հետազոտության ընթացքում էական ներդրում ունեցած բոլոր անձինք, համահեղինակների թվում անթույլատրելի է ընդգրկել հետազոտություններին մասնակցություն չունեցած անձանց,
- քննարկման ընթացքում կամ հրապարակումից հետո հոդվածում էական սխալներ կամ անճշտություններ հայտնաբերելու դեպքում հեղինակը պետք է սեղմ ժամկետներում այդ մասին տեղեկացնի «Արվեստագիտական հանդես» խմբագրությանը: